

Արաբացիք տեսան Մեռեալ ծովուն վրայ նաւթէ կղզի մը, ուսկից տասնը-վեց հազար ֆրանքի բան ծախեցին եւ ռուսաղեմայ վաճառանոցը, կենդինարը 100 ֆրանքի տալով:

Մակայն նաւթի հանքերը միայն Մեռեալ ծովու եզերքները չեն. Պ. Լարդէ կը կարծէ թէ գտած ըլլայ Ստրաբոնի կպրեղէն ժայռերու անուամբ Մասսաուայի կողմերը յիշատակածները. բաց ասկէ շատ ուրիշ տեղեր ալ կը նշանակէ, որոնց ամենուն դիրքն ալ Մեռեալ ծովուն տեղափոխութեան առանցից երկայնութեան վրայ է. ասով կը հաստատուի որ ինչուան հիմայ գլտնուած կպրային հանքերը հրաբխին շարժմանց գծին վրայ են:

Մեռեալ ծովու աւազանին հիւսիսային արեւելեան կողմը հրաբխային ժայթմունքներ թափած են անբաւ պաղաղի կոյտեր, որոնցմէ ոմանք տարածուած են ինչուան Յորդանանու հովիտներուն վրայ: Այս ժայթմունքները Ասորոց երկրին արեւելակողմը նմանցուցած են Օվիւնէի և Գարամանի հրաբխային երկիրներուն: Ասոնց նման բայց աւելի պզտիկ հոսանքներ կը տեսնուին անմիջապէս Մեռեալ ծովուն արեւելեան կողմը, որոնց երեքը կը հասնին ծովուն արեւելեան ծայրը: Զերմկային կամ հանքային աղբիւրները, ինչպէս նաև կպրային բղխմունքը որոնք հրաբխային ճայթմանց հետ եղած են, և երկրաշարժները՝ որ դեռ հիմա ալ տակն ու վրայ կ'ընեն այն կողմերը, Մեռեալ ծովուն յատակին վերջին մեծամեծ երկոյթներն են:

ՄԱՆՐ ԳԻՏԵԼԻՔ

Ռընաւ, Սէնդ-Պէօլ և Գաղղիոյ Տերակոյտը: — Սէնդ-Պէօլ մատենագիրը որ անդամ է թէ ֆառասնից ճեմա-

րանին և թէ ծերակուտին, վերջերս ուղեւով ծերակուտին մէջ պաշտպանել զՌընաւ՝ յանուն մտածելու ազատութեանը, բոլոր պաշտօնակիցներն իրեն դէմ դրդուեց և ամենուն բերնէն պարսաւի խօսքեր ընդունեցաւ, որոնցմէ մէկբանին դնենք Moniteur universel օրագրէն առնելով:

Պ. Լագազ. — Աս բանիս համար եկած չես հոս տեղ:

Պ. տը Մօրա. — Դու միայն ծերակուտին մէջ այդպիսի վարդապետութիւններ կը պաշտպանես:

Ալէէն կողմաւէ. — Այնպէս է:

Պ. տը Կրոսոյ-Ֆրամարաւ կոմսը. — Ասիկայ առաջին անգամն է որ դահլըճիս մէջ անաստուածութիւնը ջատագով մը կը դռնայ:

Պ. Լը վէռիէ. — Չենք ուզեր որ այդ վարդապետութեանց վրայ կռիւներ փրթին, բայց մեծարել ոչ երբէք:

Գաւառայէր մարաշախտը (ուժգին և դէպ 'ի Սէնդ-Պէօլ դառնալով). — Այս ժողովոյս մէջ չկրնար ջատագովութիւն գտնել այն մարդը որ ուրացած է Գրիստոսի աստուածութիւնը և մեր հարցը կրօնքին բուռն թշնամի արձանացած, որ Գաղղիացոց մեծագոյն մասին կրօնքն ալ է: Իսկ ես զիւրաքանչիւր դը ազատ թողլով որ ըստ իւր մտացը դատէ այդ մատենագրին գրուածքը, կը բողոքեմ համարձակ մէջի վարդապետութեանցը դէմ, և համոզեալ եմ որ ձայնս շատ արձագանգներ պիտի ունենայ հոս տեղ: (Շատ աղէկ շատ աղէկ: — Բարձրաձայն և երկայն շարժումն հաճութեան:)

Պ. տը Մօրա. — Ասիկայ յարմար առիթ է ծերակուտին համար որ յայտնապէս բողոքէ այդպիսի գրուածքի մը և մէջի անկրօն ու ամպարիշտ կարծեացը դէմ որոնց պաշտպանութիւնը կ'ընէ: (Այո, այո. շատ աղէկ:)